

ՀՀ ԱՆ Վ.Ա. Ֆանարջյանի անվ. ուրուցքաբանության

ազգային կենտրոնի տնօրեն,

Կ.Հ. Ծառուկյան



«Ձ» Մարտ 2026թ.

**ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԿԱՐԾԻՔ**

ԺԴ.00.08 - «Ուրուցքաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ռուզաննա Խաչատուրի Պապյանի

«Հայաստանում երեխաների և դեռահասների շրջանում ոսկրամկանային սարկոմաների
ապրելիության վրա ազդող պրոզնոստիկ գործոնների գնահատումը» թեմայով
ատենախոսության վերաբերյալ:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ոսկրամկանային սարկոմաները ներկայացնում են չարորակ ուրուցքների
հազվադեպ, սակայն կլինիկական առումով խիստ կարևոր և բարդ խումբ՝ բնութագրվելով
զգալի հյուսվածաբանական բազմազանությամբ, ազրեսիվ ընթացքով և բուժման
նկատմամբ տարբեր արձագանքներով: Ըստ Առողջապահության համաշխարհային
կազմակերպության դասակարգման՝ սարկոմաները ներառում են ավելի քան 150
ենթատեսակներ, որոնց բուժման և կանխատեսման մոտեցումները էապես տարբերվում են
միմյանցից:

Չնայած սարկոմաների ընդհանուր հազվադեպությանը, մանկական ոչ-
արյունաբանական չարորակ նորագոյացությունների կառուցվածքում դրանք կազմում են

մոտ 20%: Ջարգացած երկրներում վերջին տասնամյակների ընթացքում բուժման արդյունքների զգալի բարելավում է արձանագրվել՝ պայմանավորված վաղ ախտորոշմամբ, մուլտիդիսցիպլինար մոտեցումներով և միջազգային պրոտոկոլների կիրառմամբ: Մինևույն ժամանակ, սահմանափակ ռեսուրսներ ունեցող երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, շարունակում են առկա մնալ ինչպես ախտորոշման ուշացման, այնպես էլ բուժման հասանելիության և համակարգային կազմակերպման խնդիրներ:

Սակայն, նույն բուժումը հաճախ արդյունավետ չէ բոլորի համար: Դեռևս կան բազմաթիվ անպատասխան հարցեր ոսկրամկանային սարկոմաների տարբեր տեսակների բուժման ճիշտ մեթոդների ընտրության և կիրառման վերաբերյալ: Այդ հարցերին պատասխանելու համար շարունակաբար կատարվում են բազմաթիվ գիտական հետազոտություններ՝ ուղղված բուժման և ախտորոշման առավել արդյունավետ միջոցների հայտնաբերմանը, համապատասխան պրոզնոստիկ և պրեդիկտիվ մարկերների, բուժման լիարժեք ստանդարտների մշակմանը:

Այս համատեքստում իրականացված աշխատանքը առանձնանում է իր արդիականությամբ՝ նպատակ ունենալով գնահատել Հայաստանի Հանրապետությունում երեխաների, դեռահասների և երիտասարդների շրջանում ոսկրամկանային սարկոմաների ապրելիության վրա ազդող հիմնական պրոզնոստիկ գործոնները, ինչպես նաև ուսումնասիրել միջինստիտուցիոնալ համագործակցության ազդեցությունը հիվանդների ախտորոշման և բուժման արդյունքների վրա:

Վերոնշյալ նպատակին հասնելու համար առաջադրվել են 4 խնդիրներ, որոնք թույլ են տվել լիարժեք և համընդգրկուն կերպով ուսումնասիրել ՀՀ-ում ոսկրամկանային սարկոմա ունեցող հիվանդների բուժումը և հասնել առաջադրված նպատակին: Այդ խնդիրներն են. ուսումնասիրել հիվանդների կլինիկական և համաճարակաբանական առանձնահատկությունները, պարզել պաթոմորֆոլոգիական առանձնահատկությունները, գնահատել բուժված հիվանդների ապրելիության ցուցանիշներ և մշակել սահմանափակ ռեսուրսներին ադապտացված ոսկրամկանային սարկոմաների վաղ ախտորոշման և բուժման բարելավմանը միտված ընթացակարգեր:

Աշխատանքի գիտական նորույթը

Աշխատանքի շրջանակներում հեղինակը մանրակրկիտ ուսումնասիրել և վերլուծել է երեխաների և երիտասարդների շրջանում ոսկրամկանային սարկոմաների կլինիկական, համաճարակաբանական և պաթոմորֆոլոգիական առանձնահատկությունները, ցույց են տրվել ապրելիության վրա ազդող պրոգնոստիկ գործոնները:

ՀՀ-ում ոսկրամկանային սարկոմաների վերաբերյալ ոլորտում նմանատիպ լայնածավալ և համընդգրկուն աշխատանք կատարվել է առաջին անգամ:

Աշխատանքի կլինիկական նշանակությունը

Աշխատանքի շրջանակներում առաջին անգամ Հայաստանի Հանրապետությունում համապարփակ կերպով վերլուծվել է ոսկրամկանային սարկոմաների վերաբերյալ իրավիճակը՝ ներառյալ էպիդեմիոլոգիական պատկերը, կլինիկապաթոլոգիական առանձնահատկությունները, բուժման առանձնահատկությունները և առկա համակարգային սահմանափակումները:

Ապացուցվել է, որ միջառողջապահական համագործակցությունները (ներառյալ հեռահար բժշկությունը) նշանակալի դեր ունեն ոսկրամկանային սարկոմաների բուժման գործընթացում՝ հատկապես սահմանափակ ռեսուրսներ ունեցող երկրներում, ապահովելով մասնագիտական խորհրդատվությունների ժամանակին մատուցում և բարձրորակ բժշկական աջակցություն:

Պարզվել է, որ Հայաստանի Հանրապետությունում ոսկրամկանային սարկոմաներով հիվանդների ապրելիության ցուցանիշները համադրելի են միջազգային փորձի որոշ տվյալների հետ, և նույն հետազոտությամբ վեր են հանվել նաև առկա սահմանափակումներն ու բարելավման ուղղությունները:

Ախտորոշման պահին հիվանդության տարածվածությունը, տարիքային խումբը, ուռուցքի հյուսվածաբանական ենթատեսակը և հետքիմիաթերապևտիկ նեկրոզի աստիճանը հաստատվել են, որպես ոսկրամկանային սարկոմաների էլքի վրա նշանակալի ազդեցություն ունեցող անկախ պրոգնոստիկ գործոններ:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը

Ռ.Խ.Պապյանի ատենախոսությունը կազմված է ներածությունից, գրականության վերլուծությունից, հետազոտության նյութից և մեթոդներից, սեփական հետազոտության արդյունքներից, քննարկումից, եզրակացություններից, գործնական առաջարկություններից, գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսությունը ներկայացված է 120 էջի շրջանակներում՝ ներառելով 37 գծապատկեր : Պարունակում է գրականության 116 սկզբնաղբյուր:

Գլուխ 1 (Գրականության վերլուծություն)

Գրականության վերլուծությունում համապարփակ ներկայացված են ոսկրամկանային սարկոմաների էպիդեմիոլոգիան, դասակարգումը, ախտորոշման սկզբունքները և բուժման ժամանակակից ստանդարտները՝ առանձնացնելով փափուկ հյուսվածքային և ոսկրային սարկոմաների վարման առանձնահատկությունները: Հստակ ընդգծված են պրոգնոստիկ գործոնները, բուժման նորագույն մոտեցումները, ինչպես նաև զարգացող երկրներում բուժօգնության կազմակերպման հիմնական խոչընդոտները:

Ընդհանուր առմամբ գլուխը գրված է բավական լավ և արտացոլում է թեմային առնչվող բոլոր անհրաժեշտ կետերը:

Գլուխ 2 (Հետազոտության նյութը և մեթոդները)

Այս գլխում ներկայացված են հիվանդների հավաքագրման և վերլուծության տվյալները: Հետազոտության մեջ ընգրկվել են 2008թ.-ից մինչև 2021թ. Ֆանարջյանի անվան Ուռուցքաբանության ազգային կենտրոնում, Երևանի պետական բժշկական համալսարանի «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի քիմիաթերապիայի բաժնում և ՀՀ ԱՆ Յոլյան արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոնում ոսկրամկանային սարկոմա ախտորոշմամբ 0-ից 25 տարեկան (ներառյալ) հիվանդների տվյալները:

Հետազոտվել են հիվանդների դեմոգրաֆիկ և կլինիկապաթոլոգիկ տվյալները, իրականացված բուժումը և ապրելիությունը: Ստացված տվյալների վերջնական վերլուծությունն իրականացավել է STATA 18 վիճակագրական ծրագրակազմի միջոցով: Կատեգորիկ փոփոխականների համեմատության նպատակով օգտագործվել են chi-square թեստը և լոգիստիկ ռեգրեսիայի մոդելը: Շարունակական փոփոխականների դեպքում ստացված արդյունքների հավաստիությունը գնահատվել է t-test-ի, կորելյացիայի և

լինեար ռեգրեսիայի մեթոդներով: Վիճակագրորեն ոչ հավաստի որոշ արդյունքների դեպքում կիրառվել է Կոքսի հարաբերական վտանգների մոդելը (անգլ.՝ Cox proportional hazards model) և իրականացվել Բուտսթրեփ վերլուծություն (անգլ.՝ Bootstrap analysis):

Գլուխ 3 (Հետազոտության արդյունքները)

Այս գլխում ներկայացված են ոսկրամկանային սարկոմա ունեցող 0–25 տարեկան հիվանդների համաճարակաբանական, կլինիկական և պաթոմորֆոլոգիական տվյալները Հայաստանում՝ ընդգրկելով հիվանդացության տարեկան միջին մակարդակը, տարիքա-սեռային կառուցվածքը, ախտորոշումների բաշխվածությունը, հիվանդության փուլավորումը և տարածվածությունը: Առանձին ենթակետով ներկայացված է 2019 թ.-ից առաջ և հետո դեպքերի բաշխման, ախտորոշման վերանայման, մուլտիդիսցիպլինար քննարկումների և բուժման ստանդարտներին համապատասխանության փոփոխությունը՝ կենտրոնացված խնամքի և հեռահար համագործակցության ներդրման համատեքստում: Վերջապես, ներկայացված են ոսկրամկանային աշխատանքային խմբի գործունեության արդյունքները և դրանց հնարավոր ազդեցությունը վարման որակի և ելքերի վրա:

Վերջնական վերլուծության է ենթարկվել 200 հիվանդ: Հետազոտության չափորոշիչներին չբավարարող հիվանդներին բացառելուց հետո վերջնական վերլուծության մեջ մնացել է 193 հիվանդ, իսկ համեմատական վերլուծության մեջ՝ 157: Հիվանդների մեծամասնությունը՝ 66%, եղել են 18 տարեկանից ցածր:

Հիվանդների ապրելիության արդյունքների վերլուծությունը կատարվել է ըստ Կապլան-Մեյերի մեթոդի: Կատարված ենթախմբային վերլուծության արդյունքում պարզվել է, որ մինչև 18 տ. տարիքային խմբում լոկալիզացված հիվանդություն ունեցող հիվանդների 3-ամյա ընդհանուր ապրելիության ցուցանիշը կազմել է 80%, իսկ մետաստատիկ հիվանդություն ունեցող հիվանդների դեպքում՝ 38%, մինչդեռ 18–25 տարեկանների խմբում համապատասխան ցուցանիշները եղել են 62.5% և 29%: Այդ ցուցանիշները զիջում են զարգացած երկրներում ներկայումս գրանցվող արդյունքներին, սակայն համադրելի են բազմաթիվ զարգացող երկրների տվյալների հետ:

Առանձին վերլուծության են ենթարկվել ոսկրամկանային սարկոմա ունեցող հիվանդների տվյալները և ապրելիության ցուցանիշները մինչև 2019 թ.-ը և դիանից հետո:

Հետազոտության մեջ 2019 թ.-ը ընտրվել է որպես համեմատության կետ, քանի որ այդ ժամանակից սկսած Հայաստանում մանկական քաղցկեղի վարումը կենտրոնացվել է

Յոլյան արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոնում, իսկ ոսկրամկանային աշխատանքային խմբի հանդիպումները դարձել են կանոնավոր: Կենտրոնացումից հետո ոսկրամկանային սարկոմաների դեպքերի բաշխվածությունը սկսել է ավելի համապատասխանել միջազգային վիճակագրությանը: Հյուսվածաբանական նյութի վերանայման հաճախականությունը աճել է՝ մինչև 2019թ. 24.0%-ից հասնելով 88.4%-ի: Վերանայումից հետո ախտորոշումը փոխվել է դեպքերի 30%-ում, որոնցից 20%-ի դեպքում փոփոխվել է նաև բուժման մարտավարությունը: Նշանակալիորեն նվազել է նաև բուժումից հրաժարումը՝ 22%-ից մինչև 10.3%: Լոկալիզացված հիվանդության դեպքում 3-ամյա ընդհանուր ապրելիությունը 2019 թ.-ից հետո կազմել է 57.7%, մինչդեռ մինչև 2019 թ.-ը՝ 53.6% ($p=0.496$): Մետաստատիկ հիվանդության պարագայում 3-ամյա ընդհանուր ապրելիությունը մինչև և հետո համապատասխանաբար կազմել է 19.4% և 33.3%:

Ընդհանուր առմամբ գլխում մանրակրիտ և համապարփակ կերպով ներկայացված է հետազոտության վերաբերյալ ողջ անհրաժեշտ տեղեկատվությունը: Այն շարադրված է պարզ և հաջորդական կերպով՝ արտացոլելով հետազոտության հիմնական արդյունքները:

Քննարկում

Այս գլխում ամփոփվել է հետազոտության ընթացքում կատարված ողջ աշխատանքը, ապրելիության ցուցանիշները համեմատվում են մի շարք այլ զարգացող և զարգացած երկրների տվյալների հետ, քննարկվում են ստացված արդյունքները և տրվում են դրանց մանրակրիտ մեկնաբանությունները՝ լիարժեք պատկերացում ստեղծելով ողջ հետազոտության վերաբերյալ:

Եզրակացություններ

Եզրակացությունները հիմնված են ստացված արդյունքների վրա և ունեն գիտական բավարար հիմնավորում:

Գործնական առաջարկություններ

Գործնական առաջարկությունները շեշտադրում են կատարում ոլորտում առկա թերությունների վրա և առաջարկում են ոսկրամկանային սարկոմա ունեցող հիվանդների բուժման արդյունավետության և ապրելիության բարելավման հնարավոր ուղիներ:

Ատենախոսության սեղմագիրը կազմված է 22 էջից, ներառյալ ռուսերեն և անգլերեն համառոտ ամփոփումները: Այստեղ արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները: Ատենախոսության շրջանակներում տպագրվել են 26 գիտական աշխատանքներ (12 հոդված և 14 թեզիս):

Ատենախոսության վերաբերյալ էական դիտողություններ չկան, իսկ որոշ դիտարկումներ և առաջարկություններ ներկայացված են ստորև:

1. Աշխատանքում ներկայացված են հիվանդների կլինիկական և համաճարակաբանական բնութագրերը, սակայն հետաքրքիր կլիներ պարզել՝ արդյոք իրականացվել է գենետիկական նախատրամադրվածության գնահատում ոսկրամկանային սարկոմաներով հիվանդների շրջանում:

2. Աշխատանքում հետաքրքիր կլիներ տեսնել նաև ոչ ռարդոմիոսարկոմային ուռուցքների ենթատեսակների ապրելիության տարբերությունները:

Ներկայացված դիտարկումները, սակայն, որևէ կերպ չեն նվազեցնում կատարված աշխատանքի որակը և հանդիսանում են առաջարկներ հետագա վերլուծության համար:

